

## ՀԱՅՐ ՊՈՂՈՍ ԼԵՎՈՆ ԶԵՐԻՑԱՆ

### **Եղիշեի Երկը ՈՐՊԵՍ ՎԱՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵԿԵՂԵՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

20-րդ դարում հայրաբանական և վաղ քրիստոնեական աստվածաբանությունը միշտ շարք ուսումնասիրությունների է արժանացել: Եկեղեցին մեկն է այն փոկագործական հաստատություններից, որոնց վերաբերում են այս աստվածաբանական ուսումնքները: Ներկա հոդվածը ևս մի փորձ է վերականգնելու քրիստոնեական ուսումնքի վաղ փուլերն իրենց գիտավոր առնձնահատկություններով և մանրամասներով հանդերձ, հենվելով հիմնականում հայկական եկեղեցու կարկառուն դեմքերից և հայ հին գրականության լավագույն արձակագիրներից մեկի՝ Եղիշե վարդապետի վկայության վրա<sup>2</sup>: Խիարկե, պայի-

սի մի ուսումնասիրություն չի կարող հավակնել առարկայի սպառից հետազոտության: Ին նպատակն է պարզապես հետազոտողների ուշադրությունը հրավիրել Եղիշեի աստվածաբանության մի քանի առանձնահատկությունների վրա, որ կարող է հիմք հանդիսանալ հետազա ուսումնասիրության համար: Այս աղիթով պետք է հշել, որ թեև հայկական եկեղեցու աստվածաբանությունը և հոգևոր գիտությունը ունեն խորություն և ինքնատիպություն, սակայն դրանք սովորաբար չեն արժանացել հետազոտողների ուշադրությանը, որը սահմանափակվել է հիմնականում հունական և ստորական մշակությունից՝ որպես ողջ քրիստոնեական Արևելքի ներկայացուցիչների, ոլորտով:

<sup>1</sup> Խորիդանշացին աստվածաբության ուսումնասիրության ամփոփումը տե՛ս R. Murray, *Recent Studies in Early Symbolic Theology*, Heythrop Journal, 6 (1965), 412—33.

<sup>2</sup> Եղիշեի մատենագիտությունը տե՛ս Հ. Անաստան, «Մատենագիտություն» (Եղիշեի Վասն Վարդապետ և նայոց պատկրազմին, Բրատ, Ե. Տեր-Մինասյան, Երևան, 1957, էջ 204—219): Այս մատենագիտության «Գրականություն» բաժինն ընդգրկում է Եղիշեի բոյոր երկերը, սակայն հրատարակությունների և բարգմանությունների բաժնում սահմանափակվում է Եղիշեի «Պատմությամբ»: Հմտությունը նաև մի շարք մետապություններ, որոնք նշված չեն այդ մատենագիտության մեջ. Բ. Համելյան, «Սրբաշատի ժողովը և անոր մատենակցող եպիսկոպոսները», Բագմավեպ, 109 (1951), էջ 256—62, 110 (1952), էջ 4—10. Առվեմ՝ «Հայ եպիսկոպոսներու ինքնագույն ձևանափության մասին նկատողությունն մը», Բագմավեպ, 110 (1952), էջ

149—152. Մովական, «Հայագիտական դիտություններ. Եղիշե», Հասկ, 35 (1968), էջ 277—78. Ն. Ակինցան, Պ. Տեր-Պողոսյան, «Մատենագրական հետազոտություններ. Արքանամ Ձևականցի Խոստովանող եպիսկոպոս Բզմունքաց», Հանդես Ամսօրյա, 84 (1970), էջ 386—404. Վ. Կ. Չալոյան, «Հայոց փիլիսոփայության պատմություն», Երևան, 1975, էջ 85—88. R. W. Thomson, «The Maccabees in Early Armenian Historiography», Journal of Theological Studies, n. s. 26 (1975) pp. 335—37, 341. Ե. Տեր-Մինասյան, «Եղիշե», Հայ մշակույթի համակարգություններ, 5—18-րդ դարեր, Երևան, 1976, էջ 56—69. Լ. Տեր-Պետրոսյան, Արքանամ Խոստովանողի «Վկայք Արևելից»-ը (Բնագրագիտական մետապություն), Երևան, 1976, էջ 59—60;

Եղիշեն, որը պատմիչ էր և ներքոլագիր, մեկնիշ և աստվածաբան, իր հոչակը ձեռք է ունեցել շնորհիլ «Վարդանի և հայոց պատերազմի մասին» երկի, որը նրա գլուխգործոցն է համարվում: Նրա, որպես հնուտ աստվածաբանի, սրատեսությունն ամրողութիւն բացահայտվել է այս գործում, քանի որ այն ոչ միայն պատմություն է, այլև պատմության աստվածաբանություն:

Այս աստվածաբանության մեջ կենտրոնական դիրք է գրավում Եկեղեցու հովթյան պարզաբանումը, և Եղիշեն երկի հենց այս կողմին է նվիրված ներկա աշխատությունը: Պետք է ընդունեն, որ նրա Եկեղեցարանությունն ավելի խորն է, քան վաղ հայկական Եկեղեցու հարցերը քննող որեւէ այս հայ մատնեազրինը:

Սուն հոդվածի հիմնական աղբյուր Եղիշենի պատմական երկն է, քանի որ անշատ հարուստ Եկեղեցարանական տեղեկություններ է պարունակում: Բացի այդ

<sup>3</sup> Հրատարակությունները և բարգմանությունները տես՝ Անասյան «Մատնեազրիություն»: Եղիշենի երկերի ժողովածուն երկից հրատարակվել է Վանեալիլում՝ «Եղիշէ Վարդանոսի Մատնեազրություն» (1838, 1859): Ես վլրայնուուն եմ երկրորդ հրատարակությունը: Մի մեկնարական բնույթի աշխատություն, որ չէր ներգրավվել նշված ժողովածուի մեջ, ավելի ոչ հրատարակել են, բարգմանությամբ հանդերձ, Ն. Ակիմանը և Ս. Կոզգանը՝ Հարցմունք և պատասխանիք ի Գիրը ծննդոց Եղիշէ Վարդանության արքան՝ — Eliseé Vardapet, Ouest-onset Récopies sur la Genèse, PO, XX, fasc. 1 (Վենետիկ, 1924): Եղիշենի «Արարածոց» մեկնարակությունը, որից համաձեն են պահպանվել, և որ հիշատակվում է ոչ մեղմակենարի կողմէց, դուռ չի հայտնաբերվել, տես՝ Ն. Ակիման, «Եղիշէ Վարդանության Կողբացի, Կաները և գրական գործություններ», Հանդէս Ամսօրդա, 65 (1951), էջ 1—3: Գոյություն ունի այս հարցին վերաբերող մի շիրատարակված ուսումնասիրություն՝ Լ. Խաչիկյան, Եղիշենի «Արարածոց մեկնարակություն» աշխատությունը (Երևան, 1945), որ հիշատակվում է Ս. Արևշատյանի մոտ՝ «Պատոնի երկերի հայերեն բարգմանության ծանախակը», Բաները Մատնեազրանի 10 (1971), էջ 12, ծան. 10: Մարդու նորուն նվիրված մի փիլիսոփայական-աստվածարանական աշխատության ծավալուն հաստվածներ են պահպանվել 981 թ. մի ձեռագրում (Երևանի Մատնեազրանի № 2679, երբեմնի Էջմիածնի՝ № 202. հմտ. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատնեազրանի, 1, Երևան, 1965, էջ 853): Այս հաստվածները մուլ են Վենետիկյան ժողովածուի մեջ (էջ 369—76) Վենետիկի Միմիթարյան միարանության № 209 ձեռագրից, որն արտագըրված է Էջմիածնի ձեռագրից:

մենք փորձել ենք լրացնել այդ տեղեկությունները Եղիշենի մյուս երկերի՝ հաւերի, ներբողների և մեկնությունների ընձեռած հյութերով:

Ես այն համոզմունքն ունեմ, որ Եղիշենի ժողովածուի՝ իր հիմնական բաղադրամասերով նոյն հեղինակին պատկանելու հանգամանքը լուրջ տարակուսանքներ չի կարող առաջացնել: Նոյնը կարենի է ասել նրա գրական գործունեության ժամանակի մասին: Մենք կարող ենք վստանիր անեղեկ, որ ան ճավապվել էր 5-րդ դարի երկրորդ կեսին<sup>4</sup>:

Վարդանանց՝ Վարդանի և նրա կողմնակիցների, պայքարը, Եղիշենի պատկերացմանը, պայքար է հասուն Եկեղեցու փառքի և ազատության պահպանման: Հայ հեղինակի, Եկեղեցու պատկերն ու իրավիճակը ոչ միայն այս կամ այն պատմական իրադարձության դրդապատճառն են հանդիսանուն, այլև ան անկունաքարի են կամ առանցքը, որ մեզ հնարակությունն է տախի ընդհանրացնող հայացքով համաձայնեցնելու միմանց հետ փրկագործական իրողությունների տարրեր կողմերը և Ծրանց ներքին կապերը: Այստեղ պետք է չմոռաւան այն հանգամանքը, որ հայերի տեսանկյունից Վարդանանց պատերազմը կրոնական պատերազմ չէր բառիս դասանան իմաստով, այսինքն մի պատերազմ, որ մղում են կրոնական դավանանք հարկադրելու նպատակով, ինչ-

<sup>4</sup> Ամբողջ ժողովածուին հասուկ են այնպիսի անհատական ոճական առանձնահատկություններ և մտքեր, որ դժվար կիմներ այ կերպ բացարկ դրանք: Սա, ինարկի ընդհանուր դիտողություն է, և այն կարող է չսուրածիլ Եղիշենի ժողովածուի որևէ առանձին երկի վրա: Ինչ վլրաբերում է նրա մատնեազրական մատնեազրության բավարարմանը, այս հարցի շորջը շատ է գրել: Դարիս առաջին տասնամյակներում որոշ թիստաններ Եղիշենի գործը տևադրում էին ավելի ուշ՝ 6-րդ կամ 7-րդ դարերում, համարկով, որ այն կախում ունի Ղազար Փարպետոց: Սակայն բնադրերի ամելի մասնակիության վերածությունը ցուց է տալիս, որ ընտանիքանը, Եղիշեն փառտերի ամելի խոր իմացություն է ցուցաբերում, և նրա հատորդած տեղեկությունները ամելի լավ են համապատասխանում 440—470-ական թվականների Հայաստանի քաղաքական և եկեղեցական իրավիճակին. տես՝ մասնավորապես Ե. Տեր-Միհնապանի՝ Եղիշենի Վարդանանց պատմության աշխարհաբար բարգմանության ներածությունը (Երևան, 1946), էջ 14—92, և Բ. Համելյանի վերջ վլրայնության մեջ կարենի էր ամելացնել և ուրիշներ:

պես դա անում էին պարսկելեք: Հայերը կովում էին լոկ իրենց կրոնական անկախությունը և ազգային հնագույթը: Հայական կայսրության պատմապիքից պաշտպանելու համար: Հայերի պաշտամիքը պարսկելերին ցույց տված նրանց դիմադրության տրամաբանական արդյունքը կովի դաշտում նահատակվելու էր: Այս առումով շատ կարևոր է «Պատմության» 5-րդ գլուխ վերջը. Ծեկողեցին ի հայու է գաւական այստեղ իր բուն դերում, որպես Եղիշչի կողմից պատմական իրադարձությունը քրիստոնեական իմաստով ընկալելու կենտրոն: Եղիշեն Ակարագրում է պատրազմի նախօրինի վերջնական պատրաստությունները: Իրադարձությունները տեղի են ունենում հոգևոր վերելքի մթնոլորտում: Հայական զորքի հրամանատարի՝ Վարդահի, և ապաստամբության ոգին մարմնավորող Ալեքսանդր երեցի ճառերից հետո, «Անդամ կանգնեցնելով, ամենասուրբ խորհրդը կատարեցին, պատրաստեցին նաև ավազան, և եթե զորքի բազմության մեջ չմկրտված մարդ կար, ամբողջ գիշերը մլրտեցին. և առավոտյան սուրբ հաղորդություն ընդունեցին և ալմաես լուսագգեստ դարձան, ինչպես տերունական մեծ սուրբ զատկին»<sup>5</sup>: Գլուխն ավարտվում է մի վեհապահ օրինաբանությամբ. «Եվ զորքի ամբողջ բազմությունը մեծ զվարճությամբ և սատիկ ուրախությամբ աղաղակեցին և ասացին. «Թո՞ն՝ մեր մահը արդարների մահին հետ հավասարվի և մեր արյան թափվելը՝ սուրբ մարտիրունների արյան հետ. թո՞ն՝ Աստծուն համեմի լինի մեր կամավոր զոհաբերությունը և իր եկեղեցին թող հեթանունների ձեռքը չըմատնի»<sup>6</sup>:

Այս խոսքերը սեղմ են և հակիրճ, սակայն հենց նրանք են կազմում Եղիշեի պատմության կորիզը: Այն ամբողջությամբ վերցրած ոչ այլ ինչ է, եթե ոչ նոյն Եկեղեցու պաշտպանության հիմնական գաղափարի զարգացումը: Վերջինս ամեն անգամ ճակատագրական պատերին վերակենդանում է Եղիշեի գրչի տակ: Այսպես, օրինակ, երբ հայ նախարարներին, որոնք մինչև պատերազմի բռնկվելը գնա-

<sup>5</sup> Եղիշեի Վարդանաց պատմությունը, թարգմանությամբ և ճամփագրություններով պրոֆ. դ-ր Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1958, էջ 104 (114): Հևոնագի ճամփագրություններում վկացակոչվելու է սոյն թարգմանությունը: Փակագներում հշվում է Ե. Տեր-Մինասյանի քննական հրատարակության (Երևան 1957) նամապատասխան էջը:

<sup>6</sup> Նոյն տեղում:

ցել էին պարսկական արքունիք, ձերբակարում են և բանտարկում, նրանք աղաղակում են, հիշելով Աքրամանի զոհաբերությունը. «Հօդունի՛ր, Տե՛ր, մեր աշխամանը նվերը և մի՛ թույլ տա, որ այս անօրեն իշխանը ըստ եկեղեցին ծաղրութանակի հետարկի»<sup>7</sup>: Նմանապես, երբ պարսկական մի զորամաս, դավական Վասակի ընկերակցությամբ, շրջապատել էր ամրոցում քահանաների հետ միասին ապաստանած նարդիկ աղաղակեցին և ասացին. «Ծնորհակալ ենք քեզանից, մեր Տե՛ր Աստված, քանի դեռ չեն են եկեղեցիները... և միարան և առաջինացած է եկեղեցցու սուրբ ոխառ, մեզ արժանի արեցիր արկանավոր կոչումին: Թո՞ն՝ մեր մահը հավասարվի քաջ նահատակների մահվանը... և տիրոջը համեմի լինեն իր եկեղեցիները՝ այն բազմաթիվ կամավոր զոհերով, որոնք բարձրանում են այս սուրբ սեղանի վրա»<sup>8</sup>: Եվ պատմիչը շարունակում է. «Այս ասելով՝ տեղնուտեղը նահատակվեցին երկու հարյուր տասներեք հոգին»<sup>9</sup>:

Եղիշեն՝ Ակարագրելով այն սահմանափակումները, որոնք պարսից արքա Հազերս երկրորդը պարտադրում է հայերին, և այն տառապանքները, որոնց ենթարկում է նրանց, այս գործողությունների հայտակն արտահայտում է մի պարզ նախադասությամբ. «Որպեսզի եկեղեցու փառքը նեմացնեն»<sup>10</sup>: Ավելին, հայերը հանդործում են ամեն տեսակի հոգտական և տրնտեսական ճնշում, քանի դեռ «ոչ ոք հայունի կերպով ծեռք չէր տվել եկեղեցուն»<sup>11</sup>: Եկեղեցու այդ կենտրոնական նշանակությանը նվիրված հատվածներ Եղիշեի մոտ շատ կան»<sup>12</sup>:

Իսկ այժմ հիմնական գծերով քննենք, թե ինչպես է Եղիշեն պատկերացնում Եկեղեցու իրականությունը, որ փաստորեն նրա աստվածաբանական միջի և հատկապես՝ պատմության աստվածաբանության կենտրոնն է հանդիսանում:

<sup>7</sup> II, 48 (49):

<sup>8</sup> VI, 112 (123):

<sup>9</sup> Նոյն տեղում:

<sup>10</sup> II, 27 (28),

<sup>11</sup> Նոյն տեղում:

<sup>12</sup> Բացի այն հատվածներից, որոնք մեջքերվելու հետ բողմածում, տե՛ս նետկալմերը. Բնիշնակի խորեն ողղված Դավիթ Մամիկոնյան երեցին, էջ 10 (5), I, 17 (10), II, 49 (50), III, 65, 72, 78 (70, 77, 79), V, 109 (121), VI, 115, 119 (127, 132), VII, 138, 167, (154, 188):

## Եկեղեցոր հոգևոր ընկալումը

Սուածին հերթին պետք է հատկապես ընդգծել այն հանգամանքը, որ Եկեղեցու հոգևոր էությունը սերտորեն կապված է եկեղեցու՝ հյութական կառույցի հետ։ Այնքան սերտ է այդ որպուի միջն եղած կապը, որ նրանք հաճախ նույն ստորոգայի ենթական են։ Օրինակ, «Պատրաստ ենք հայածինու և մեռնելու և ամեն տեսակ նեղություն ու շարչարանք կրելու այն սուրբ եկեղեցիների համար, որ ավանդեցին մեզ մեր ասիստայրերը՝ մեր Տեր Հիւսուս Քրիստոսի գալստյան զորությամբ, որով նորից ծնվեցինք... Որովհետև մեզ ճանաչում ենք ... մայր՝ առաքելական կատողիկե եկեղեցին»<sup>13</sup>։

Այս խոսքերն այնքան ավելի կարևոր են, որքանով որ այս եկեղեցիները ճախսներից ժառանգած լինելու պատկերացումը ստիպում է այս մարդկանց խորանակու հավատի հոգևոր աշխարհի և հոգևոր Եկեղեցին ստեղծող քրիստոնեական շնորհի գիտակցության մեջ։

Չափ բովանդակալից է այդ հիմատով հետևյալ հատվածը, որ հայ ճախարարներն իրենց հավատի շատագովությունն են անում Հազկերտի առաջ։ «Մի՛, թագավո՞ր, այս մի՛ ասի մեզ այդ բանը, որովհետև եկեղեցին մարդու շինածը չէ և ոչ էլ արեգակի տվածը, որի մասին դու թյուրիմացարար կարծում ես, թե աստված է... եկեղեցիները ոչ թագավորի պարզն են, ոչ ճարտարարվեստների գործ, ոչ իմաստունների գյուտ, ոչ զինվորների քաջութան ավար, և ոչ էլ դեմքի ստապատիր խարեւություն, այլ ինչ էլ որ ասելու լինեն երկնավորներից, վեր բաներից թե վատթարներից, ոչ մի տեղ նրանցից ամենին եկեղեցի չի ստեղծվի։ Այլ մեծ Աստծու շնորհն է այն, որ տվել է ոչ թե մարդկանցից որևէ մեկին, այլ բոլոր բանական ազգերին, որոնց վիճակված է այս արեգակի ներքո բնակվել։ Նրա հիմքը դրված է հաստատուն վեմի վրա. ոչ ներքինները կարող են այն շարժել և ոչ վերևինները սասանեցնել։ Իսկ ինչ որ երկինքն ու երկիրը չեն կարող խախտել, թող մարդկանցից ոչ որ չխրոխտա հայոթել նրան»<sup>14</sup>։

Սա Եկեղեցու աստվածային, երկնային, կամ մասնագիտական տերմինով ասած, «գերբնական» էության մի հոյակապ մկարդարություն է։ Սակայն անդրադառնանք մեր առջև դրված խնդրին: «Եկեղեցի»

հասկացության կիրառության մեջ անցումը եղակիից հոգևոր թվին և կրկին եղակիին, որ հեղինակի կողմից առարկակի երկար ընթացման լեզվական արտահայտությունն է, մատնաշում է սերտ կապը Եկեղեցու որպես հոգևոր էության» և Եկեղեցիների՝ որպես հոգևոր կարույցների միջն։ Ինարկե, «Եկեղեցիներ» հոգևոր կամակեն, որպես այդպիսին, կարող է նշանակել և տղական համայնքները։ Եվ, իմ կարծիքով, այս հիմասոր պետք չէ բացառել։ Կարելի է նույնիսկ ասել, որ բայց հոգևորի կիրառության մեջ առկա է որոշ շափով գիտակցիված երկիմաստություն։ Սուավել ևս, Եղիշենի «Պատմության» ամբողջ շարադրանքից և Եկեղեցու կառույցների բազմաթիվ անմիջական հիշատակություններից ելենով՝ պետք է ընդունել, որ դըրանք հիմնականում վերաբերում են վերջիններին։ Միաւ կիմներ կարծել որ «Եկեղեցի» բայի եղակի և հոգևոր թվով հոգևոր և հյութական հմաստով, կիրառությունը, գրական ոճի հարց է։ Ընդհակառակը, մենք անընդհատ զանգացում ենք ոհսում, ավելի խորը և ներքին էությանը մոտենալու հիմատով։ Կարելի է ասել, որ այդ երկուսի հարաբերությունը նման է խորհրդանշանի, կամ արտաքին և շոշափելի հշանի հարաբերությանը իր համապատասխան անտեսանելի և հոգևոր էությանը։ Այս ենթադրությունը մենք կարող ենք ամրագնել մեջքերված հատկածի մանրազնին վերլուծությամբ։ Փաստուն, առաջին ճախադատությունը, որ նման է դոդութի հաստատման, դիտում է Եկեղեցին նենց որպես հոգևոր էություն։ Այս աքսիոնատիկ հայտարարությունն այնունետև տաքանակում է հոգևոր կարեղեցիների որշակի պատկերով։ Հատվածի շառներուն մեջ նորից հաւտենիում է հոգևոր Եկեղեցու գաղափարը, որն այժմ ավելի հասկանալի է իր տիեզերական տվյալու և հոգորությամբ հանդերձ, քանի որ նրա խորհուածին են հանդիսանում բազմաթիվ հոգևոր կառույցներն, ինչպես նաև տղանակ համայնքները։ Այս տեսանկյունը մեծագույն հիտաքրքրություն է ներկայացնելու համար կամական թվով կիրառված «Եկեղեցի» բայի երկիմաստությունը, որ հատվածի միջին մասում տատանվում է հոգևոր կամական և հոգևորի միջն, և նրա հետագա անցումը դեպի միջն, և նրա հետագա անցումը դեպի միջնի միջնի «Պատրաստ ենք

<sup>13</sup> III, 63 (67):  
<sup>14</sup> II, 53, (46):

15 Անա մի այլ կարևոր անցում «Եկեղեցի» բայի կիրառության մեջ հոգևոր կամակի թվին, «հյութական կառույց» հշանակությունից դեպի «հոգևոր համայնք» հշանակությունը. «Պատրաստ ենք

### Եկեղեցու նյութական ընկալումը

Եկեղեցու կառույցը այն արտօնեալ վայրու է, որտեղ իրենց լիարժեք արտահայտությունն են գտնում քրիստոնեական խորհուրդները և քրիստոնեական կամքը: Այդ են մատունաշշում այն բոլոր բազմաթիվ հաստվածները, որոնք վերաբերում են եկեղեցիներին, նրանց վեճ փայլին ու շորին, աշխարհիկ իշխանությունից նրանց ազատ լինելուն, քրիստոնյաներին միավորելու և նրանց միջև իսկական, ողջերին ու համագույցալերին միավորող միարանություն հաստատելու դերին: Նկարագրելով Վասակի ողբրուի վախճանը, Եղիշեն նշում է. «Արա անոնց չինչվեց սրբերի շարքում, և ան չինչատակվեց Եկեղեցու սուրբ սեղանի տառաց»<sup>16</sup>: Այս խորսերը Եղիշեն տեսանկունից շատ լուրջ իմաստ են պարունակում: Եկեղեցում, սուրբ սեղանի տառացին է զրկվել հավերժական երանությունից: Եթե մարդ հոգևոր միարանության մեջ է գտնվում Եկեղեցու, հավատացրածների համայնքի հետ, դա նրա՝ սրբերի հետ միարանության նշանն է:

Եկեղեցու շինության դերի և կարևորության գաղափարը ավելի խոր է լուսաբանված երկու հատվածներում, որոնցում կառուցի խորհրդանշական զրությունը նվիրական իմաստ է ստանում: Երրորդ գլուում թերվում է պարմիկ մի մոգական ճառը, որի մեջ, անկակած, արտահայտվել են և Եղիշենի սեփական մտքերը. «...թեպետ փակեց պարսից թագավորը ու կնքեց Եկեղեցիների դռներն ամբողջ Պարսից աշխարհում, բայց նրանք ամեն տուն Եկեղեցի դարձրին, և ամեն տեղ իրենց

հապածելու և մեռնկու և ամեն տեսակ նեղույթու ու շարչաբնի կրկու՝ այն սուրբ կելունեցիների համար, որ ախանուին մեզ մեր համամաքերը՝ մեր Տեր Հիսոս Քրիստոսի գալատաս զրությամբ, որով նորից ծնվեցիմք...» (III, 63): Բնագրու երկու հարաբերական դերանուններն են պար և հաւանակ որպես նողանի, և նրանց լոյկ զոգամեռնությունը, ցոյց է տախու, որ նրանք երկուսն են վերաբերում են «սուրբ Եկեղեցիներին», եթե բացառունք երկրորդ դերանուամբ «Տեր Հիսոս Քրիստոսի գալատաս զրությամբ» արտահայտության ներ կապի հնարապորտյունը. «Պատրաստ եմք ի հապածն... վասմ սուրբ Եկեղեցեաց, զոր աւանդեցին հարքն մեր սուաշինք զօրութեամբ զալսունան Տեսաւ մերոյ Ցիսուսի Քրիստոսի, որով վերասին ծնաք ի մի լոյս հաւատոյն մկրտութեամբ ի Քրիստոս Ցիսոս» (Էջ 67): Տե՛ս նաև ծան. 13, 19:

<sup>16</sup> VI, 126 (140):

պաշտամունքն էին կատարում, և ամեն մեկն իր անձը վկանարան [martyrium—Պ. Լ. Զ.] էր համարում, և մարդկուն շինածածքն ավելի լավ էին համարում, քան հողեղեղներ»<sup>17</sup>: Սպելի նշանակալից է մրու հատվածը: Այս անգամ խորսը պատկանում է իրեն՝ նեղինակին, «ծրանց մրունցներն ու երգերը սաղմուներն էին, իսկ կատարյալ ուրախությունը՝ սուրբ գլուխերը ըսթերցումը: Ամեն մարդ ինքը իր մեջ կեղեցի էր՝ և նոյն ինքը քահանա. ուրաքանչյուր մարմին սուրբ մեղան էր, և նրանց հոգիները՝ ընդունելի զոհարերություն»<sup>18</sup>:

Այս հատվածները շատ կարևոր են, քանի որ նրանցում ամենից բրուեղացած կերպով է արտահայտվել Եկեղեցու՝ որպատկան և Եկեղեցու՝ որպես հոգևոր էպության հարաբերությունը: Փաստուեն առաջին հատվածի վերջին խոսքերը ակրնեալ են դարձնում այն հանգամանքը, որ Եկեղեցու իսկական էպությունը կարելի է գտնել միայն հոգևոր բնագավառում: Դա այն իսկական էպությունն է, որ քրիստոնեական միաստան և նիմիրական պաժեր է հաղորդում հոգիթական կառուցին: Այս ներքին իրականությունը, որը ձև է տախու շոշափելի իրականությանը, ինչպես պարզվում է մասնավորապես երկրորդ հատվածից, յուրաքանչյուր հավատացրալի զիտակցված սրբազն գոհն է, որի շնորհիլ նա իր տեղն է գտնում Քրիստոսի քահանարդյան մեջ:

Ամփոփելով մենք կարող ենք ասել, որ յուրաքանչյուր հավատացրալի ներսում գտնելող հոգևոր տաճարը իսկապես կառուցվում է շնորհիլ իր զոհարերության և նիմիրատկության, որ նա կատարում է որպես այդ զոհերն ու ներքերը մատուցող քահանա: Այս ներքին իմաստի հոգիթական խորհրդանշին են հանդիսանում քրիստոնեական համայնքի Եկեղեցիների շինավագալը:

### Եկեղեցին և հասարակությունը

Մենք քննեցինք Եղիշեն Եկեղեցու ընկալումը ինչպես նյութական, այնպես էլ բովեար իմաստով. սակայն մենք դիտել ենք այս հոգևոր արժեքի միայն զոհարերական և քահանապահական արտահայտությունները, առանց անորադառնալու Եկեղեցուն հասարակության և համայնքի առումով: Աղքատիս մի ավելի լավ պատկեր

<sup>17</sup> III, 57–58 (60–61):

<sup>18</sup> VI, 113 (125). Բնիտ. նաև Ի շարչաբնի Տեսաւ, Եղիշեն մատունագրությունը, Էջ 245;

ստանուր համար մենք այժմ կրնենք մի շաբ նոր թեմաներ, որոնք բացահայտում են և կեղեցու մի քանի նոր իմաստները կամ գործառնությունները:

### Մայորիզուն

Եկեղեցին հանդես է գալիս մոր դերում. Եղիշեն հիմնավոր կերպով զարգացնում է այս թեման: Նոր «Պատմության» երրորդ գլխում բազմությունն աղաղակում է: «Պատրիատ ենք հայածվերու... սուրբ եկեղեցների համար, որով նորից ծննդեցինք մի հավատի հուսով, մկրտչերով Հիսուս Քրիստոսի անունով... Որովհետև մեզ հայր ենք ճանաչում սուրբ ավետարանը և մայր՝ առաքելական կաթողիկե եկեղեցին. թող ոչ ոք իբրև չար անշրաբն մեջ ընկնելով մեզ սրանց չքածանի»<sup>19</sup>:

Այս գաղափարն ավելի ընդգծված է: 7-րդ գլխում, որտեղ խոսքը եկեղեցու միասնության մասին է: «Հանի որ մեր մայր եկեղեցին մեկ է, որ երկնեց մեզ, և մեկ է մեր հայր Սուրբ Հոգին, որ ծննց մեզ, ինչո՞ւ պետք է մի հոր և մի մոր զավակները երկպատակտված լինեն և ոչ յու միաբան»<sup>20</sup>:

Այս ծագումնաբանության տարբեր արտահայտությունները՝ Սուրբ Հոգոց ծննդա մինելը, Ավետարանի ծննդական գորությունը, մկրտության ավազանի նվիրական ազդեցությունը, որդեգրության շնորհը, և եկեղեցու պատկաներու համար Քրիստոսի հետ միավորումը, այս բոլորը ի մի են բերված մի ընդարձակ պատկերում, երբ Եղիշեն նկարագրում է Վասակի ապրամբությունը: Այս փաստը չակտությամբ թվա մեզ: Եղիշեն այնքան է ազդիված դավաճանությունից, որ Վասակի կերպարն իր ամբողջութիւն բացասական էությամբ «Պատմության» մեջ նույնիսկ ավելի կարևոր տեղ է գրավում, քան ներու Վարդանինը. և Եղիշենի լավագույն էջերի թվին են պատկանում այն հատվածները, որոնցում նա ողբում է դավաճանի ողբերգական ճակատագիրը: Ամա Վասակի ապստամբության նկարագրությունը. «...Նա իր կամքով է իր անձը շոկել և անջատել սուրբ եկեղեցուց, հեռացել և օտարացել Քրիստոսի սիրոց: Որովհետև նա մոռացության էր տվել Աստծո Որդու գալուստը և չիշեց Սուրբ Ավետարանի քարոզությունը, ոչ սպառնալիքներից և ոչ էլ ավետիսով միմիթարիեց: Ուրացավ այն ավա-

գանը, որ նղացավ նրան, և չիշեց ընկալու Սուրբ Հոգին, որ ծննց նրան: Անարգեց այն պատվական մարմինը, որով սրբից, և ոտնահարեց այն կենդանի արյունը, որով մեղքերի քալություն ստացավ: Չնչեց որդեգրության գիրը և իր ձեռքով խորտակվեց մատան հաստատուն կնիքը, դրու եկավ երանելիների թվից և շատերին ապստամբեցրեց իր հետո»<sup>21</sup>:

Եկեղեցու այս մարդական կերպարն, այնուամենամին, նրա ծննդական դերի արտահարություններից միայն մեկն է, Եկեղեցին, որ կամք է տախու նոր զավակների, ինեց այս փաստի շնորհիվ, սերում է, իր անդամներով և իր մերքին էությամբ հանդերձ, նոյն աստվածային գորությունից: Արախուու, Եկեղեցու մագրությունը կապես առնչակցվում է նրա զավակ լիներու համբամանքին: Այս աստվածային գորության միջնորդները են (այն գորության, որի շնորհիվ Եկեղեցին միևնույն ժամանակ և մայր է, և դուստը) «հարք բոգեկիրք», այսինքն Սուրբացները, Մարգարենները, ճշմարիս հովհանները, որոնք մարդկանց սրտերում սերմանում են Աստծո բանը և հավատը»<sup>22</sup>: Արանում է Եկեղեցու արտադրությունը, որ միևնույն գործողության շնորհիվ նա դառնում է մայր և դուստր, ծնող և ծննդա:

### Ուխտ

Եկեղեցու էությունը բնութագրելու համար Եղիշենի օգտագործած մյուս հիմնական պատկերն արտահայտվում է «ուխտ» բառով, որն իրականում շատ բարդ տերմին է, քանի որ օժտված է տարբեր իմաստներով: Իր հիմնական առումով «ուխտ» բայց Հայկացյան բառարանի, նշանակում է «խոստումն հաստատուն, խօսք հաստարիմ իրը երդմամբ, չափ, առաջարրութիւն, դաշն»<sup>23</sup>: Անկալած, Եղիշեն կիրառում է այս բառը իր առաջնային իմաստով, ինչպես, օրինակ, հետևյալ հատվածում. «...Նրան էլ [Վահանին—Պ. Լ. Զ.] դեսպան ուղարկեցին Հոների երկիրը... նրանց հետ բանակցերու և դաշն

<sup>21</sup> VI, 83—84 (91). Բնմտ. նոյնպես Յերևանի Տեատրի Աշակերտայ, «Եղիշենի Մատենագրությունը», էջ 312, և Քարոզություն Սուրբելոց, նոյն տեղում, էջ 354:

<sup>22</sup> Ի շարչարան Տեատր, էջ 241. Բնմտ. նոյնպես և Քարոզություն Սուրբելոց, նոյն տեղում:

<sup>23</sup> Նոր բազիրք Հայկացյան լեզուի, հ. 2, Վենտակի, 1937:

«ուխտ» կնքելու, որ հաստատ մնան այդ միարանության վրա»<sup>24</sup>:

Հետագայում, դասական և ետքասական գրաբարում, «ուխտ» բառը ստանում է երկրորդային՝ «կղեր» նշանակությունը: Դժվար չէ պատկերացնել, ինչպես է առաջ եկել այդ իմաստը: Փաստորեն, «ուխտ»-ը, բառին վերը նշված իրավական բարյության տեսանկությունը, բոգուրականության վիճակի համար էական երևույթ է. սրանով էլ կարելի է բացատրել նրա կիրառության անցումը բարյության տակական նշանակությունից դեպի հասարակական-եկեղեցական ողբուժին պատկանող նրա լրացուցիչ իմաստը: Վերջինս էլ հենց շատ հաճախ է կիրառվել Եղիշեի կողմից<sup>25</sup>:

«Ուխտ եկեղեցնոյ» արտահայտությունը Եղիշեի մոտ համարյա տեխնիկական տերմին է, որ նշանակում է «հոգևորականություն»: Առավել կամ նվազ հաճախականությամբ կարելի է հանդիպել «ուխտ»-ով կազմված և նույն իմաստն արտահայտող բառակապակցությունների, ինչպես, օրինակ, «ուխտ քահանայութեան»<sup>26</sup>:

Նման արտահայտություններ առկա են Սգաֆարանգեղոսի մոտ, ինչպես, օրինակ, «ուխտ քահանայութեան սրբոյ եկեղեցնոյ» և «ուխտ սրբոյ եկեղեցնոյ քահանայութեան», յուրաքանչյուրը՝ մեկական անգամ<sup>27</sup>: Այստեղ կարևոր է այս արտահայտությունների բացակայությունը: Սրբ. Գրիգոր Լուսավորչի Վարքի վաղ խմբագրության մեջ (որ թարգմանություն էր հունարենից, և մեզ է հասել միայն հայերենից թարգմանված հունարեն տարբերակով), այն մասերում, որոնց համապատասխան առկա է պահպանված հայերեն խմբագրության մեջ<sup>28</sup>: Մենք կարող ենք եզրակացնել, որ խնդրո առարկա արտահայտությունները ներմուծվել են, և բացաված չեն, որ Եղիշեի ազդեցությամբ, 5-րդ դարի վերջին, Սգաֆարանգեղոսի վերջնական խմբագրման ընթացքում<sup>29</sup>:

<sup>24</sup> III, 72 (78):

<sup>25</sup> Օրինակ՝ II, 27 (28), III, 56, 58, 59 (59, 62, 63), IV, 85 (92):

<sup>26</sup> III, 52 (54):

<sup>27</sup> Հմտ. Հայկական համարարատ, 4, Սգաֆարանգեղոս (1909), Երևան, 1973, էջ 355,

<sup>28</sup> Հմտ. G. Gariote. Documents pour l'étude du livre d'Agathange, ST, CXXVII (Vatican, 1946, հուն. բանգեր, §148, p. 92)

<sup>29</sup> Հմտ. P. Ananian. „La data e le circonstanze della consecratione di S. Gregorio Illuminatore“—Le Muséon, 74 (1961), pp. 317—24.

«Ուխտ եկեղեցնոյ» և «ուխտի մանկունք (եկեղեցնոյ)» բնորդի արտահայտությունների «հոգևորականություն» նշանակությամբ հաճախ կարելի է հանդիպել դասական շրջանում թարգմանված կանոնների ժողովածուներում, ինչպես նաև ավելի ուշ ծիսական և կանոնական բնագրերում<sup>30</sup>: «Ուխտար» և «ուխտական» ածանցյալ տերմինները նույնպես հաճախակի են հանդիպում նույն կանոնական գրականության մեջ «հոգևորականություն», ինչպես նաև «վահականներ» կամ «կուսակրներ» նշանակությամբ: Այս ածանցյալով ձևարձր չկամ Եղիշեի մոտ<sup>31</sup>: Այնուամենայնիվ, նրանց իմաստային կապը վերը նշված արտահայտությունների մեջ ակնհայտ է: Վաղ գրականության մեջ «ուխտար» բառը, բացի կանոնական բնագրերից, կարելի է գտնել Եղիշեի մոտ «վահական» կամ «կուսակրներ» նշանակությամբ<sup>32</sup>, ինչպես նաև Ափրահատի ճաների (ճառ 8) թարգմանության մեջ, որ հրատարակված է Հակոբ Մծրնացու անվան տակ<sup>33</sup>, և Սրբ. Բարսեղի դիւնս շիրատարակված<sup>34</sup> վահական կանոններում (Գիրք հարցողաց կամ հարցմանց)<sup>35</sup>: Եղիշեից առաջ մենք գտնում ենք «ուխտական» բառը Կյուրեղ Երուսաղեմացու մոտ, հունարեն չ.γριαός; բայի դիմաց<sup>36</sup>: Այնուհետեւ, որքան որ մեր գիտելիքները թոյլ են տալիս մեզ պահելու, Եղիշեն, հայկանարար, առաջին հեղինակն է, կանո-

<sup>30</sup> Տե՛ս Կանոնագիրը հայոց, աշխատահրատանք՝ Վազգեն Հակոբյանի, Բ. Ա., Երևան, 1984, Բ. Բ., Երևան, 1971:

<sup>31</sup> «Պատմության» համար մենք ստուգել ենք ըստ՝ Հայկական համարարատի, 5, Եղիշեի Վասու Վարդանայ և Հայոց պատրիարքին, (Երևան, 1957), 1972:

<sup>32</sup> Հմտ. Հայկական համարարատ, 1, Եզնիկ, Եղի աղանդոց (Վեհետիկ, 1826), Երևան, 1972, էջ 710:

<sup>33</sup> Հրատարակությունները նետնալմանը են՝ Սբրոյ նօրի մարոյ Յակոբաց Մծրնայ Եպիսկոպոսի նաոք. cum praefatione, notis et dissertatione de Ascetis quae omnia nunc primum in lucem prodicunt (Կուռա, 1756). Գիրք, որ կոչի Զօնն արարեալ սրբոյ Յակոբաց... հայրապետին Մծրին բաղադրի, Կոստանդնուպոլիս, 1824:

<sup>34</sup> Գրականությունը տե՛ս Հ. Աթայան, Հայկական մատուցախություն, 2, Երևան, 1976, էջ 1361—68,

<sup>35</sup> Տես Նոր բանգիրք Հայկագեան լեզուի:

<sup>36</sup> Երանելույն Կիրողի նայրապետի Երուսաղեմայ Կոչումն ընծայութեան, 15 (Վինենա, 1882), էջ 309, PG XXXIII, 877: Catechesis, XV, VII,

նական գրականությունից զատ, որ օգտագործում է «ովաս եկեղեցւոյ» արտահայտությունը «հոգևորականություն» իմաստով:

Այս բոլոր արտահայտությունները, և առաջին հերթին «ովաս եկեղեցւոյ», ինչպես նաև «ովասի մանղունք», հոգևորական ծագում ունեն: Արդեւ Սատիածաշնում կան այդօրինակ արտահայտություններ, ինչպես՝ Ե՞՞ո՞ւ ոսե՞՞ր (Եղեկ. 1, 5) «որդիք ովասին», Ե՞՞ո՞ւ հակկհոռնահ—«ովաս քահանայութեան» (Նետմ. ԺԳ, 29), Ե՞՞ո՞ւ ունեա՞—«ովաս Ղեկայ» (Մաղաք. Բ, 8): Նման արտահայտություններ հաճախ հանդիպում են վաղ աստրական միջավայրում, որ ենայ կամ եռակ Գյամմ «ովասի (դաշինքի) որդիներ կամ դաստեր» սովորական բառեր են անամուսնությանը կամ կուսակրոն և ճզգնավոր կյանքին իրենց նվիրած մարդկանց համար<sup>37</sup>:

Այսպիսի արտահայտություններից անցումը 5-րդ դարի հավական կամոնական և ճգնավորությանը վերաբերող տերմինարկությանը առաջինների բնական շարունակությունը մետք է համարել: Սակայն աստրական և հավական ավանդությունները տարբերվում են միմյանցից: Այսպես, աստրական միջավայրում Գյամմ առաջին հերթին նշանակում է, և բացառված չէ, որ հեսսեական ազեղցության շնորհիվ, իրենց անամուսնությանը նվիրած հոգևորականներին<sup>38</sup>, իսկ հայերեն «ովաս» բառի հիմնական կիրառությունը վերաբերում է Եկեղեցու քահանայապետությունը, անկախ հոգևորականների՝ անամուսնության վիճակին պատկանելուց: Մենք այս բանի պարզ վկայությունն ունենք Առաքեական կամոններում. «Կարգեցին առաքեալքն և եղին հաստատութեամբ եթէ ոք ի կարգէ պաշտօնէից և լուսու եկեղեցւոյ, և կամսցի կուսան լինել բարոյ գործոյ ցանկակար»<sup>39</sup>:

«Ովաս» բառի այս կիրառություններից բացի, որոնք հաստանշական են ոչ միայն Եղիշեի համար, մենք մի քանի անգամ

հանդիպում ենք նրա մոտ մի երրորդ կարևոր իմաստի, որը ստացվել է բառի հասարակական-եկեղեցական լրացուցիչ իմաստի լայնացման ճանապարհով: Այս տեսանկյունից Եկեղեցին կամ քրիստոնեական համայնքն ամբողջությամբ ունաւ է: Ինարկե, ճիշտ է, որ «ովաս եկեղեցւոյ» արտահայտությունը համարյա տեխնիկական տերմին է Եղիշեի մոտ, «կղեր» նշանակությամբ, ինչքան մեզ հայտնի է, այն հազվադեպ է օգտագործվում այլ կապակցությամբ: Սակայն դիտենք եւտևալ օրինակները.

1. Արտաշատում Միհրներսեհի նամակին պատասխանելու համար հավաքված եպիսկոպոսների անունները թվարկերուց հետո Եղիշեն ասում է. «Այս բոլոր եպիսկոպոսները և բազմաթիվ քրիստոնեակուպուներ և պատվական երեցներ զանազան տեղերից Եկեղեցու սուրբ ովասի հետ միահն (հանդերձ սուրբ ովասի Եկեղեցւոյ)»<sup>40</sup>:

2. Հայերը, լսելով Աղվանից երկրում պարսիկների գործած անօրենությունների մասին, «արձակեցին (պատգամավորներին) ...որպեսզի... թույլ չտան իրենց Եկեղեցու սուրբ ովասին դիմություն»<sup>41</sup>:

3. Երրորդ գլխի վերնագրում, ինչպես երևում է և երկի առաջարանից կամ ընծայականից, Եղիշեն դիմում է Դավիթ Մամիկոնյան երեցին: Զայած մենք վրստահ չենք, որ առաջարանի այս մասի մեզ հասած խմբագրությունն արտահայտում է Եղիշեի բնագիրը<sup>42</sup>, ամենայն հավանականությամբ կարելի է ենթադրել, որ եթե ինչոր փոփոխություններ եղել են, նրանք պետք է վերաբերենք վերջին երեք գլուխների վերնագրերին: Այսպիսով, հավանաբար, Եղիշեի գրչին է պատկանում երրորդ գլխի վերնագիրը՝ «Միաբանութիւն ովասին Եկեղեցոյ»<sup>43</sup>: Այսուելից կարելի է եզրակացնել, որ «ովաս Եկեղեցոյ» արտեղ նշանակում է ամբողջ Եկեղեցին կամ ավելի շուտ նաև քրիստոնեաների ողջ համայնքը, որոնք ստանձնել են իրենց հավատի պաշտպանության գործը: Այս հանգամանքն ակնհայտ է դատնում և ողջ գրլիսի պատմական բովանդակություննից: Հեղինակի միտքը ներկայացնենք հետևյալ հատվածով. «Այնուհետև տերը ծառայից ավելի չեր երևում, և ոչ էլ փափուկ մեծա-

<sup>37</sup> Տե՛ս R. Murray, „Recent Studies“, 424f.

İdem. Symbols of Church and Kingdom. A Study in early Syriac Tradition (Cambridge, 1977), 12–17, 29f.

<sup>38</sup> Տե՛ս ծան. 37:

<sup>39</sup> Canones Apostolici, ed. H. Ghedighian, in: Fonti, Series II, fasc. XXI; Collectio Canonum Ecclesiae Armenae, I (Venice, 1941); Canones Apostolici primi, cen. 32, p. 26;Կանոնագիրը նայոց, Բ. Ա., էջ 46:

<sup>40</sup> II 31 (28):

<sup>41</sup> III 66 (71):

<sup>42</sup> Հմատ. Ե. Տեր-Միհրապան, Եղիշեի «Պատմության» թիվական հրատարակության ստացարանը:

<sup>43</sup> 9 (3), III 52 (54):

ցած սպատով՝ առաւազալ գեղջուկից, և ոչ ու մեկը մշտից ամենի պակաս քաջորթան մազ: Սիւսույն հոծար սիրուն ունեին բոլորն էլ՝ տղամարդ և կին, ծար և տղա, և Քրիստոսի անունով բոլոր միարանվաճենութեան: Որվինեան առ հասարակ բոլորն են միևնույն զենքով զինվորության և Քրիստոսի հավատի պատվիրանի միևնույն զրաբը հագան, ճշարտության միևնույն գոտիով ամրացրին իրենց մաշքերը, թե տղամարդիկ, և թե կանայք<sup>44</sup>: Այսպիսով, եթե ընդունեանք, որ այս գլխի վերևագիրը պատկանում է Եղիշեին, «ովհան եկեղեցւոյ» անկանակ վերաբերում է ամբողջ Եկեղեցւու:

Այստեղից կարեի է եզրակացնել, որ վերը նշված բոլոր հատվածներում «ովհան եկեղեցւոյ» արտահայտությունը, ամենայն համամակամությամբ, նշանակում է հավատացյալների համակերպ որպես այդպիսին: Նույն նշանակությամբ ստևազն չորս անգամ «Պատմության» մեջ Եղիշեն օգտագործում է «ովհան քրիստոնեութեան» արտահայտությունը<sup>45</sup>: Ավելին, առնվազն մեկ անգամ մենք գտնում ենք «ովհան քրիստոնեից» արտահայտությունը<sup>46</sup>: Բոլոր այս դեպքերում, և առավել վատահ դա կարող ենք պնդել III, 68 (73)-ի համար, «ովհան» նշանակում է ոչ անքան բարոյական գործողությունը որպես այդպիսին, այլ որևէ նվիրական խոսքի, երդման կամ դաշինքի շնորհիվ առաջացած միաձուլ և կույ կազմակերպություն: այլ խոսքով ասած՝ «դաշինքի մարդիկ»: «Ովհան քրիստոնեութեան» կամ «քրիստոնեից» նենց իրենք քրիստոնաներն են, որոնք միավորված և համախմբված են սուրբ խոսքով, իրենց օծումով, Տիրոջ նետ իրենց դաշինքով: Նոյն իմաստով է օգտագործում Եղիշեն «ովհան հայոց»<sup>47</sup> արտահայտությունը, որն ուղղակիորեն աւանանդում է իրենց կրոնին հավատարիմ հայերին, և առավելապես կովելու և մաքանելու գնով հրան հավատարմությունը պահելու հրանց պատրաստակամությունը: Վերջինիս նման է Կիրառվում «ովհան առաքինութեան» արտահայտությունը<sup>48</sup>, որում «առաքինութեան» վերացականը հավանաբար փոխարինում է «առաքինեաց» թանձրացականին, ինչպես դա հնարավոր

է դասական հայերեանում, «առաքինության համայնք» կամ «առաքինիների համայնք»՝ որպես կույ, խիստ միավորված կազմակերպություն, նշանակությամբ:

Այսպիսով, «ովհան քրիստոնեութեան» այսից արտահայտությունների, ինչպես և «ովհան եկեղեցւոյ» արտահայտության հայարամական-եկեղեցական կիրառությունը ազգում է «ովհան»-ից, որպես բարոյական համակացությունից: Իհարկե, այն յուրահասուկ պատմական հանգամանքը որոնց ուղանանելուում Եղիշեն գրել է իր երկը, կարևոր են բացարելու համար, թե ինչո՞ւ է նա դիտում ողջ քրիստոնեական համայնքը որպես «ովհան»: Այս առիթով մենք կարող ենք իշեկ ասորական Ծաղոթ-ի գաղափարի ներքին կապը ճշևակորի կյանքում մղվող Արքազան պատերազմի հետ<sup>49</sup>: Մեր կարծիքով, երկու գաղափարական կառուցվածքների այսպիսի համարքում տեղին է և հնարավոր: Փաստորեն, հեղինակը տարբեր առիթներու ընդգծում է հավատացյալ հայերի «ովհանը», արխենքն պատերազմից առաջ նրանց հանդիսավոր խոստումը<sup>50</sup>: Այս պատմական հախառյալաները, որ կարող էին ոգեշնչել Եղիշեին ողջ քրիստոնեական համայնքը «ովհան» համարելու, չեն բացառում, որ նա կարող էր որիշ, ավելի խորը պատճառներ ունենալ այդպես ընկալելու քրիստոնեական համայնքը: Փաստորեն, հոգևորականությունը ովհան է կազմում իրենց Ակրտության սուրբ և հանդիսավոր խոստման շնորհիմ: Հոգ չէ, որ այս հարաբերությունը արտահայտված չէ Եղիշեի մոտ պարզորոշ կերպով: Մենք բավական փաստեր ունենք այսպիսի եզրակացություն անելու համար: Մենք արդեն նշել ենք, որ նա տարբեր առիթներով ընդգծում է հավատացյալ հայերի հանդիսավոր խոստումը և այդ ինչ պատճուռով նա կարող է խոսել «Հայոց ովհան»-ի՝ որպես հավատացյալ հայերի մի կույ կազմակերպության մասին: Այսուեւու մենք կարող ենք, հետևելով Եղիշեի եկեղեցարանությանը և կրոնական ուսմունքներուն, «ովհան քրիստոնեութեան» արտահայտությունը թանձրացականին, ինչպես դա հնարավոր

<sup>44</sup> III 62 (67):

<sup>45</sup> III 68, 73 (73, 78), VI 114 (126), VII 167 (187):

<sup>46</sup> I 14 (7):

<sup>47</sup> III 69 (75), IV 83, 86 (90, 93):

<sup>48</sup> IV 87 (95):

<sup>49</sup> Հմտ. Murray, Symbols of Church, 16f.

<sup>50</sup> Օր. III 62, 68, 75 (66, 73 82):

հնարավոր է մի վաղ քրիստոնեական արանքու գոտել հնախնական ասորական ավանդության մեջ, որը, սակայն, դեռևս լիովին մեկնաբանված չէ: Մենք ի մեկանի ունենք վաղ ասորի հեղինակների այն հասուլածները, որոնցում (ջառա -ի գաղափարը կարծես տարածվում է մկրտվածների ողջ համայնքի վրա<sup>51</sup>):

Կարող ենք եզրակացնել, որ Եկեղեցու հասարակական կացության աճանակարելու կողմերից մենք «ուխտն» են: Եկեղեցին ուստի է կազմում, առաջին հերթին, իր պատուհանների մկանամբ: Բայց Եկեղեցին ուստի է կազմում նաև իր բոլոր անդամների բազմության մկանամբ: Պաշտոնաները և հավատացյալները կապված են միմյանց նետ այնպիսի ամուր, անքակտելի պարտավորությամբ, ինչպիսին ուստի է, մարդկանց Սատու նետ և միմյանց միջև ամենասրբազն կապը: Եկեղեցին իր բուն Էռոթյամբ Սատու և մարդկանց և Քրիստոսի հավատացյալների՝ միմյանց միջև այս դաշինքի մարմնավորումն է:

Այս համառոտ ակնարկի հպատակն էր ներկայացնել Եղիշեի կողմից Եկեղեցու ընքունեան հիմնական, առանձնահատկությունները: Եկեղեցին խորապես հոգևոր Էռոթյուն է, աստվածային իր ծագումով, իր միմքերով և իր նպատակով: Իր գործունեության տեսանկունից այն մայր է, որ ծնում է մարդկանց հավերժական

կյանքի համար, իսկ իր լնկալող Էռոթյան մեջ այն Աստծու զավակների և Քրիստոսի եղանակների համայնք է: Ինչպես իր գործող, այնպես էլ ընկալող արտահայտություններում այն ուխտ է, մի կոտ միություն, որ միափորված է Քրիստոսի հավատի և սիրո ամուր կապերով, տոգորված և սեփած է սրբազն կյանքով: Իր ընությամբ հասարակական կազմակերպություն լինելով, Եկեղեցին իր առանձին անդամներով հանուերծ, մի անբաժանելի ամբողջություն է: Ցուրաքանչյուր քրիստոնյայի մեջ արտահայտվում և հրականանում է շնորհիված կյանքը և Աստծու փառարանությունը: Վերջապես, Եկեղեցու հոգևոր Էռոթյունը, ինչպես հասարակական, այնպես և անձնական կողմերով, խորհրդանշական արտահայտություն է գտնում (որ մի իսկական ազդու և իրապատում խորհրդանշից է) Եկեղեցու կառուցի մեջ, հավատացյալների ժողովի այդ արտոնյալ վայրում\*:

\* Սովոր նորվածք նախապես լրաւ է տևակ անգիրներ լեզվով. տե՛ս Boghos Levon Zekian, Eliše as Witness of the Ecclesiology of the Early Armenian Church.—In: „East of Byzantium: Syria and Armenia in the Formative Period”, Dumbarton Oaks Symposium 1980, Dumbarton Oaks, 1982, p. 187—197 Հայերևն քաղմանությունը կատարել է Մաշտոցան Մատենադարանի գիտական աշխատակից, բանահրական գիտությունների թեկնածու Գոհար Մուրադյանը:

<sup>51</sup> Հմտն. Murray, Symbols of Church, 14f.

